

ՇԱՅՈՑ ԼԵՂՎԻ ԱՊԱԳԱՆ

Ռուբեն Թարումյան-Հակոբյան

Երբեմն դժգոհում եմ. «Ինչո՞ւ ենք միշտ ուզում բոլորից տարբերվել», ապա, կես-կատակ կես-լուրջ ասում. «Ո՞ւմ էր պետք մնալ քրիստոնյա կամ մեր գրից կառչած մնալ: Ընդունեինք մահմեդականություն, վերցնեինք լատինական գիրը (ինչպես թուրքերն արեցին) եւ խնդիրներ չէին լինի»:

Սակայն խնդիրն այն չէ, որ «ուզում ենք տարբերվել». այստեղ շփոթված են պատճառը եւ հետեւանքը. խնդիրն այն է, որ բացարձակապես իրար նման ոչինչ չկա: Մարդիկ տարբերվում են ըստ ռասաների, ազգերի, լեզուների, բնակավայրերի, հասակի, դիմագծերի: Եւ մարդիկ պարզապես ձգտում են պահպանել իրենց արդեն իսկ առկա ինքնությունը: Միաժամանակ գտնվում են անհատներ որոնք չեն ուզում լինել այն ինչ կան: Դա թերարժեքության բարդության դրսեւորում է՝ հոգեկան որոշակի խանգարում. մարդուն ասելի է դառնում իր էությունը, կամ էության մի մասը եւ նա ձգտում է ազատվել դրանից: Մեկը փոխում է իր մաշկի գույնը, մյուսը կրծքի ձեւը, երրորդը կտրում է քիթը, մեկ ուրիշը փոխում է սեռը: Այս շարքին է պատկանում նաեւ ազգի, մայրենի լեզվի փոփոխության ցանկությունը: Թերարժեքության բարդության առաջանում է հասարակության մեջ տիրապետող պատկերացումների, մոդայի ազդեցության տակ, երբ անհատն իրեն բարոյապես նսեմացած է զգում: Անշուշտ, բոլորը չէ, որ ենթարկվում են այդ հիվանդությանը այլ, սովորաբար, ձգտում են պահպանել իրենց ինքնությունը: Մեր ազգի մեջ ինքնության պահպանման ուժն ընդհանուր առմամբ բավարար է եղել, ինչի լավագույն ասպացույցը մեր այսօրվա ազգային պետության գոյությունն է:

Այնուհանդերձ, մենք ունենք սեփականից հրաժարվելու եւ այլոց արժեքներն ընդունելու մեծ փորձ: Ծիշտ է, մահմեդականություն չենք ընդունել ու կարծես թե չենք էլ ընդունի: Բայց ժամանակին մենք հրաժարվեցինք մեր նախնիների ցեղապաշտությունից, ընդունեցինք Ջրադաշտի ուսմունքը, ապա, քաղաքական նկատառումներից դրդված հրաժարվեցինք նաեւ նրանից, անվանեցինք կռապաշտական (չնայած որ այն ոչ մի կապ չունեն կռապաշտության հետ) այրեցինք նախորդ սլակույթը, ընդունեցինք Հիսուսի ուսմունքը, իսկ մեր դարում արդեն հրաժարվեցինք նաեւ քրիստոնեությունից, եւ այսօր մեր ազգի հիմնական գաղափարախոսությունն անաստվածությունն է (աթեիզմը):

Ինչ վերաբերում է լատինագրին անցնելուն, ապա դարասկզբում ոչ միայն Թուրքիայում այլև մեզ մոտ այդպիսի մի վորձ արվեց, բայց մնաց անավարտ (նրանից մեզ մնաց միայն աղճատված ուղղագրությունը, որն այնքան մեծ եռանդով են պաշտպանում մեր ակադեմիկոսները): Իսկ այսօր մենք շատ ավելի մոտ ենք լատինագրին անցնելուն, քան դարասկզբում:

Եւ այսպէս.

- 405 թվականին հայոց մշակույթի եւ ժողովրդի կյանքում կատարվեց կարեւորագույն իրադարձություն. ստեղծվեց ժամանակակից հայոց գիրը:

- 1512 թվականին տեղի ունեցավ եւս մի, ոչ պակաս կարեւոր իրադարձություն. լույս տեսավ առաջին հայալեզու տպագիր գիրքը:

- Երբ էր, որ առաջին անգամ էլեկտրական կամ ռադիոկապի միջոցներով գրանցվեց եւ հաղորդվեց հայոց խոսքը (մոտավորապէս՝ դարասկզբում) այնքան էլ ստույգ հայտնի չէ, չնայած որ սա ոչ պակաս կարեւոր իրադարձություն էր:

- Նույնքան անորոշ է համակարգչային միջավայրում հայալեզու առաջին գրանցման օրը:

- Կարող է տարօրինակ թվալ, որ ցանկացած կրթված հայի հայտնի են առաջին երկու տարեթվերը, որոնք մեր օրերից դարերի հեռավորության վրա են, բայց անհայտ է մի քանի տասնամյակ առաջ կատարված դեպքերի պատմությունը:

- Թերեւս սա անուղղակի արտահայտությունն է այն իրողության, որ հետզհետե մեր ազգն ավելի ու ավելի նվազող նշանակություն է տալիս ազգային մշակույթին ու, մասնավորապէս՝ տեխնիկական նորագույն միջոցների կիրառմամբ՝ նրա զարգացմանը: Մինչդեռ բոլոր թվարկված իրադարձությունները ճակատագրական էին հայոց լեզվի ապագայի տեսակետից: Թվարկված բոլոր դեպքերում համաշխարհային քաղաքակրթությունը նոր տեխնիկական հենքի էր անցկացնում տեղեկության գրանցմանը, եւ յուրաքանչյուր դեպքում նոր պայմաններում հայոց լեզվի եւ մշակույթի լինելիներու հարցն էր դրված: Դա լավ է գիտակցվում գրերի ստեղծման պարագայում, քիչ ավելի պակաս նշանակություն է տրվում հայ տպագրության ստեղծման դեպքում, գրեթե չի գնահատվում հայալեզու հեռահաղորդակցումը, իսկ այն, որ այսօր մենք հնարավորություն ունենք հայալեզու տեքստեր մշակել համակարգչային միջոցներով՝ բոլորովին չի գնահատվում, չնայած որ թվարկվածներից սա, թերեւս, ամենահրաշալիս է եւ կարեւորագույնը:

- Եւ քիչ է ասել «չի գնահատվում»: Այն, ինչ այնուամենայնիվ արվել է այդ ասպարեզում, այն, որ այսօր մեր գրեթե բոլոր հրատարակչություններն անցել են համակարգչային շարվածքի,

ստեղծվել են առաջին անհրաժեշտության հայերեն ծրագրեր եւ այլն, այս ամենն արվել է հաղթահարելով գիտական, տեխնիկական, մշակութային եւ պետական որոշ շրջանակների հակադեմոկրատիկությունը: Բայց այն ամենն, ինչ կարելի էր անել էնտուզիազմի շնորհիվ՝ արդեն արված է: Այսօր առանց լուրջ, հուսալի աջակցության այլեւս ոչինչ չի հաջողվի անել:

Անհրաժեշտ է նախ եւ առաջ հայոց լեզվի ուղղագրության հիմնարար կանոնարկում: Ինչպես գիրը պահանջեց բանավոր խոսքի որոշակի կանոնարկում եւ տպագրությունը ստիպեց հրաժարվել ձեռագրերում տիրող ձեւային բազմազանությունից, այդպես էլ հաշվողական տեխնիկան է պահանջում ունենալ հնարավորին չափով միանշանակ ուղղագրություն: Դարասկզբում կատարված ուղղագրական փոփոխությունը ոչ միայն չբարելավեց հայերենի գրային համակարգը, այլեւ ներկայիս տեխնիկայի պահանջների տեսանկյունից դժվարագույն խնդիրների հանգեցրեց:

Ինչեւէ, այսօր անհրաժեշտ է շուտափույթ կերպով ուղղել սխալները եւ հաստատել լեզվական այն համակարգը, որի հիման վրա հնարավոր կլինի ստեղծել հայալեզու ծրագրային սպահովում: Սինչդեռ նրանք, ովքեր պիտի լուծեին այդ խնդիրները՝ լեզվաբանները, այսօր նստակենտրոն վեճերի մեջ են խորասուզվել, հաճախ չգիտակցելով, թե ինչպիսի անդունդի եզրին է ընթանում իրենց առճակատումը: Չի գիտակցվում, որ այլեւս տպագիր տեքստերը, գրքերը չէ, որ պիտի որոշեն այս կամ այն լեզվի սպազան, այլ համակարգչային ցանցերում դրա կիրառումը: Այսօր, երբ ակադեմիկոսները հրաժարվում են գիտակցել պարզագույն ճշմարտություններ եւ «իմ»ագրության կամ «վե»ագրության նրբությունների շուրջ վիճաբանում են դարասկզբի մոտեցումներից ելնելով, իրական կյանքում՝ համակարգչային ցանցերի բնագավառում տարերայնորեն կատարվում է անցում հայատառ հայերենից՝ լատինատառ հայերենի:

Այսօր հաղորդակցվողներն արդեն վիճում են ոչ թե այն մասին, թե «ե»ը գրեն երկու տառով, թե մեկ տառով, այլ այն մասին, թե «չ»ն գրեն «ch»ով, թե՞ «j»ով: Բերեմ ավելի պատկերավոր օրինակ:

Այսօր համակարգչային ցանցերում աշխատողների միջեւ վեճեր են ընթանում ո՛չ այն մասին, թե կիրառու են սոյն հոդվածի նախորդ նախադասություններում ընդունուած ուղղագրական կանոնները, թե՛ տուեալ նախադասութեան ուղղագրութիւնը, այլ յաջորդ երկու տարբերակների միջեւ:

Aha aid erkou tarberaknery: Sa arajinn e: Aistex iouraqanjour haieren hnjiounin hamapatasxaneovac e mek latinakan tar` orpeszi bavararvenq latinakan 26 tarerov: Ousti ardiounqourm mi sarq tarer, orinak «չ», «ջ», «ն»` artahaitvac en mieunouin "յ" tarov. «Ու»-ն injpes eu haiatar groum kam ardi franserenoum, artahaitvac e erkou tarov "ou": Pahparvac en naeu ketadrakan nasanneri kirarman haieren kargy: Zarnaca?e eq:

Isk aha ajs tarberakum juraqanchjur tap uni ir nshanè, shnorhiv nra, vor ogtagorcvac en erkgrutjunner ev Iracucich granshanner, inchpes da èndunvaç è latinatagir lezunerum, masnavorapes` thurqerenum. Orinak «չ», «ջ» tapern artahaitvac en erku tapov. Evropakan è naev ketadrakan nshanneri kirapumè: nkateciq? Ev guce shutov (èndamenè, chors-hing tari heto), ðez, sireli akademikosner, knerkaiacven ajspisi tarberakner ev duq stipvaç klineq èntrutjun katarel arden sranc midjev.

Սա կատակ չէ, ոչ էլ սադրանք: Սա կյանքն է: Այսպիսին է իրողությունը: Արդեն այսօր հազարավոր հայեր «հայրենիքում եւ ի սիրտու աշխարհի» էլեկտրոնային փոստով հաղորդակցվելիս միմյանց գրում են ահա այսպիսի նամակներ: Եւ դա կատարվում է ոչ այն պատճառով, որ այդ մարդիք հայրենասեր չեն, այլ որովհետեւ այդպես ավելի հարմար է: Եւ հարմար է, որովհետեւ հայոց լեզվի գործածությունը համակարգչային ցանցերում պետականորեն չի կանոնակարգված: Որովհետեւ նախորդ 10 տարիների ընթացքում ոչ ոք հոգ չի տարել տեխնիկական միջոցների զարգացման բերումով ստեղծված նոր պայմաններում հայ մշակույթի զարգացման ռազմավարության մշակման մասին: Իսկ դրա պատճառն այն է, որ ազգը սպասարկող եւ առաջնորդող հասարակական, ուսումնարկական, մշակութային եւ գիտական օղակները, այդ թվում` այսպես կոչված «ակադեմիական» ինստիտուտներն անհույս կերպով հետ են մնացել կյանքից: Ուստի եւ ի վիճակի չեն առաջնորդել:

Ոչ, իհարկե համակարգիչների մասին լսած կան: Տեսած էլ կլինեն: Եւ կարող է նույնիսկ քննարկել են այն հարցը, թե ինչու մենք պիտի ասենք «համակարգիչ» եւ ոչ թե «քոմպյուտեր», կամ, պարզապես «կոմպյուտեր»: Կամ էլ, պատմել են միմյանց այն կատակը, երբ համակարգչին հարցնում են «Ի՞նչ կա-չկա» եւ այն վառվում է: Բայց այդ ժամանակները, երբ նման հարցից մեքենան կվառվեր, վաղուց անցել են (վկա` Կասպարովի պարտությունը համակարգիչին): Այսօր եթե մեքենան սկսի պատասխանել այդ հարցին կարող արդեն է վառվել հարցը տվողի ուղեղը, քանի որ այն տեղեկության քանակը, որն այսօր կարող է արձակվել մարդու վրա համակարգչային ցանցերից աներեւակայելի մեծ է ու բազմազան:

Բայց տեղեկություն ստանալը քիչ է. դեռ պետք է հասկանալ այն: Իսկ դրա համար նախ պետք է իմանալ այն լեզուն, որով

համակարգիչը կպատասխանի: Գաղտնիք չէ, որ առավել հաճախ այդ պատասխանը կլինի անգլերեն: Հաշվարկները ցույց են տալիս, որ մոտ ապագայում համակարգչային ցանցերից ստացվող տեղեկության քանակը կգերազանցի այլ խողովակներով, այդ թվում կենցաղային գրույցից, մամուլից եւ նույնիսկ հեռուստատեսությամբ ստացվող տեղեկության քանակին: Դա նշանակում է, որ եթե մենք մոտ ապագայում (մեկից հինգ տարում) չկարողանանք ապահովել օգտվողների՝ ցանցերի հետ հայերեն աշխատելու հնարավորությունը (ստեղծելով հայալեզու ծրագրային ապահովում, ինչպես նաև հայերեն թարգմանող ծրագրեր), ապա. առաջիկայում մեր ազգը հետ կմնա օպերատիվ տեղեկություն ստանալու հնարավորությունից, եւ ապա նոր սերունդները կնախընտրեն հայերենի փոխարեն սովորել անգլերեն (միտում, որն այսօր արդեն նկատվում է):

Քչերը գիտեն, որ այսօր արդեն գրեթե բոլոր իրենց հարգող ազգերը հասել են իրենց լեզուներով ծրագրերի արտադրության: Համակարգչային համաշխարհային ցանցում՝ «Միջազգայնացում» (Ինտերնետ) կարելի է տեսնել տեքստեր, գրված տասնյակ լեզուներով. իսպաներեն, գերմաներեն, ֆրանսերեն, իտալերեն, ռուսերեն, պորտուգալերեն, նորվեգերեն, հունգարերեն, լեհերեն, շվեդերեն, հունարեն, թուրքերեն, ճապոներեն, չինարեն, կորեերեն, ուկրաիներեն, ֆիններեն եւ այլն, եւ այլն: Այս լեզուներով աշխարհի առաջատար ընկերություններն, ինչպիսիք են «Մայքրոսոֆթը», «Ադոբը» եւ այլն կրկնօրինակում են իրենց հանրահայտ ծրագրեր:

Իհարկե, դրա համար գումարներ են անհրաժեշտ: Խոշոր ազգերի՝ ռուսների, ուկրաինացիների, գերմանացիների, իսպանացիների, լեհերի, ճապոնացիների, չինացիների պարագայում առկա է սպառող խոշոր շուկա եւ դրամական խնդիրները լուծվում են շուկայի օրենքներով: Սակայն, ինչպես տեսնում ենք, նաև փոքր ազգերը, որոնք զիջում է մեր, հայերիս թվին՝ նորվեգացիները, ֆինները իրենց լեզուներով ծրագրեր են պատվիրում եւ արտադրում: Դա անհնարին կլինի առանց հասարակական եւ պետական կազմակերպությունների օժանդակության:

Իսկ ո՞ր են մեր հասարակական եւ պետական կազմակերպությունները: ուցե այդ խնդիրների համար այնքան մեծ գումարներ են պետք, որ դրանք անհնա՞ր է հայթայթել: Իրոք, գումարները փոքր չեն: Օրինակ, «Ուինդուզ», «Մայքրոսոֆթ օֆֆիս» ծրագրերը հայերեն թարգմանելու համար անհրաժեշտ կլինի մի քանի հարյուր հազար դոլար: Բայց մի՞թե սա խոշոր գումար է մեր ազգի համար, որը կռապաշտական մոլուցքով լցված կարող է 40 միլիոն դոլար ծախսել ահռելի չափերի տաճար կառուցելու համար (ընդ որում այն դեպքում, երբ եղածներն էլ, նույնիսկ եկեղեցական տոների

օրերին կիսադատարկ են): Ոչ, այսօր արդեն պարզ է, որ մի քանի տասնյակ միլիոն դոլար մեր ազգի «բարերարներն» ի վիճակի են հայթայթել: Միայն թե երեւի պիտի ազգովի խոստանանք նրանց, որ իրենց անունով որեւէ քաղաք կանվանվի. կարծում եմ մեծ գին չի, եթե նկատի ունենանք, որ խոսքը մայրենի լեզվի փրկությանն է վերաբերում:

Քայց նույնիսկ մի քանի տասնյակ հազար դոլարով կարելի էր սեփական ուժերով ստեղծել այնպիսի ծրագրեր, ինչպիսիք են ուղղագրիչ, թարգմանիչ ծրագրերը, թեզարուրուսները, պատվիրել հայատառ համակարգչային ստեղծաշարներ եւ այլն: Այդ գումարները կարող էին տրամադրել մեր նախարարությունները: Սակայն նրանք կնախընտրեն այդ փողերով՝ խաղեր խաղալու համար մի քանի ավել համակարգիչ ձեռք բերել ու դրանց վրա տեղադրել անգլերեն, ռուսերեն ծրագրեր: Դրանով իսկ խախտելով, ի դեպ, Հայաստանի Հանրապետության լեզվի մասին օրենքը:

Վիճակը շտկելու համար նախ եւ առաջ անհրաժեշտ է.

- հանրապետության տարածքում համակարգչային ցանցերի զարգացմը հայտարարել պետական հոգածության խնդիր եւ ընդունել դրա իրագործումը կարգավորող պետական ծրագիր,
- արագացնել հայոց լեզվի ուղղագրական կանոնարկումը, դրա համար հարապետության Նախագահին կից ստեղծելով համապատասխան ժամանակավոր աշխատանքային խումբ,
- պետականորեն խրախուսել եւ օժանդակել հայալեզու ծրագրային ապահովման եւ տվյալների հայալեզու շտեմարանների ստեղծումը,
- հանրապետության կառավարությանը կից ստեղծել նորագույն տեխնոլոգիաների ասպարեզում պետական քաղաքականությունը համակարգող մշտական գործող հանձնաժողով:

Եւ արագ, արագ, արագ: Անցել են այն դարերը, երբ բազմաթիվ սերնդների կյանքի ընթացքում ոչ մի էական փոփոխություն չէր կատարվում: Այսօր յուրաքանչյուր օրը նորանոր աշխարհացունց հայտնագործություն է ծնում: Հաշվարկները ցույց են տալիս, որ ընդամենը 4և5 տարի անց տեխնիկայի զարգացման արագությունը կկրկնապատկվի:

Մեզ շատ քիչ ժամանակ է մնացել: Եւ մի քանի տարի եւ այլեւ չենք հասցնի բարձրանալ համաշխարհային քաղաքակրթության հեռացող գնացքի նույնիսկ վերջին սայլակին:

Նշվեց աշխարհափոխության ֆիզիկոս Արտյոմ Ալիխանյանի ծննդյան 100—ամյակը



Աշխարհափոխության ֆիզիկոս Արտյոմ Ալիխանյանի ծննդյան 100—ամյակի կապակցությամբ ՀՀ ԳԱԱ—ում անցկացվեց հանդիսավոր նիստ: ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի խոսքով, Ա. Ալիխանյանը ոչ միայն աշխարհափոխության գիտնական էր, այլև «գիտության հզոր կազմակերպիչ»: «Առանց չափազանցելու կարելի է ասել, որ Ա. Ալիխանյանը Հայաստանում ֆիզիկական գիտության հիմնադիրներից մեկն է»,—ասաց նա:

Արտյոմ Ալիխանյանը Պ. Լ. Կապիցայի, Լ. Դ. Լանդաուի, Ի. Վ. Կուրչատովի եւ Ա. Ի. Ալիխանովի հետ միասին ԽՍՀՄ—ում միջուկային ֆիզիկայի հիմնադիրներից մեկն է: Ալիխանյան եղբայրները միասին կատարել են մեծ թվով ռադիոակտիվ տարրերի բետտա սպեկտրների ճշգրիտ չափումներ եւ բացահայտել են բետտա սպեկտրի ձեւի կախումը քիմիական տարրերի կարգաթվերից: Ֆիզիկոսն ակտիվ աշխատում էր ոչ միայն Հայաստանում, այլև միաժամանակ ղեկավարում էր մի շարք կառույցներ նախկին ԽՍՀՄ տարածքում: 1960—ական

թվականներին նա Խորհրդային Միության գիտությունների
ակադեմիայի ֆիզիկայի ինստիտուտի տիեզերական
ճառագայթների լաբորատորիայի վարիչն էր, միաժամանակ
եղել է նաև Սոսկվայի ինժեներաֆիզիկական ինստիտուտի
ամբիոնի վարիչը:

Ըստ ՀՀ էկոնոմիկայի նախարար Ներսես Երիցյանի, Ա.
Ալիխանյանն առանձնացել է գլոբալ մտածողությամբ, իր
գործին եւ հայրենիքին նվիրվածությամբ եւ
նպատակասլացությամբ: «Այս ամենը հանգեցնում է եւ
անձնական, եւ արված գործերի հեղինակության
բարձրացմանը»,–ասաց նա:

Նշենք նաև, որ Արտյոմ Ալիխանյանը 1942թ. հիմնադրել է
երկար տարիներ ղեկավարել է Երևանի ֆիզիկայի
ինստիտուտը, որն այժմ կրում է նրա անունը: Ա. Ալիխանյանի
ղեկավարությամբ նախագծվել է 1961—ից գործել է Երևանի
ֆիզիկայի ինստիտուտի 6 ԳԷՎ էներգիայով էլեկտրոնային
սինքրոտրոնը: 1961թ. Նոր Ամբերդում ֆիզիկոսը հիմնադրել է
բարձր էներգիաների ֆիզիկայի միջազգային դպրոցը:
Գիտության եւ գիտակազմակերպչական գործունեության
համար Ա. Ալիխանյանն արժանացել է ԽՍՀՄ բարձրագույն
պարգևների՝ 1970թ. Լենինյան մրցանակի, 1941 եւ 1948 թթ.
ԽՍՀՄ պետական մրցանակների:

09-07-2008

Հայ մաթեմատիկական դպրոցի առաջատարը



ԳԱԱ-ն երեկ տոնեց Սերգեյ Մերգելյանի ծննդյան 80-ամյակը

Մայիսի 19-ին լրացավ նշանավոր հայ մաթեմատիկոս, գիտության ականավոր գործիչ Սերգեյ Մերգելյանի ծննդյան 80-ամյակը: Երեկ գիտությունների ազգային ակադեմիայում, գիտական ոլորտի ներկայացուցիչներն ու նրա գործընկերները նշելով նրա հոբելյանը՝ անդրադարձան նրա կյանքին եւ գիտական գործունեությանը: ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը նշեց, որ նախորդ ամսվա ընթացքում մեծ գիտնականին նվիրված բավականաչափ միջոցառումներ են կազմակերպվել ինչպես երեւանյան բուհերում, այնպես էլ ՀՀ մարզերում: Շնորհավորելով գիտության ականավոր գործչին, ԳԱԱ նախագահը բարձրաձայնեց իր երախտագիտության խոսքը՝ ավստոսալով, սակայն, որ նա այս պահին իրենց կողքին չէ վատառողջ լինելու պատճառով: Նրա գործընկերները կարեւորում են մեծ գիտնականի ունեցած դերը հայ մաթեմատիկական դպրոցի, բարձր տեխնոլոգիաների եւ հաշվողական տեխնիկայի զարգացման գործում եւ նշում, որ նրա մուտքը գիտական աշխարհի նշանավորվեց հայկական մաթեմատիկական դպրոցի ձեւավորմամբ: Անդրադառնալով մի քանի կենսագրական տվյալների՝ ԳԱԱ թղթակից—անդամ Վալերի Մարտիրոսյանը հիշեցրեց, որ 1947 թ. ավարտելով ԵՊՀ—ն՝ 19-ամյա Սերգեյ Մերգելյանն ուսումը շարունակել է ԽՍՀՄ ԳԱ

մաթեմատիկական ինստիտուտում, որտեղ հնարավորություն է ունեցել աշխատել ականավոր ռուս գիտնական Մստիսլավ Կելդիշի հետ: 1949թ., Ս. Մերգելյանի ֆունկցիաների մտավորության տեսությունը ինստիտուտի գիտական խորհուրդը գնահատեց որպես բացառիկ արժեքավոր հետազոտություն՝ 21—ամյա երիտասարդին միանգամից շնորհելով գիտության դոկտորի կոչում: 1951թ., Մերգելյանն ապացուցեց իր հռչակավոր բազմանդամային մտավորության թեորեմը, որը եզրափակվեց՝ 1885թ. սկսված ուսումնասիրությունների երկար շղթան՝ ներառելով Կ. Վայերշտրասի, Կ. Ռունգեյի, Մ. Լավրենտեի, Մ. Կելդիշի եւ այլոց դասական հետազոտությունները: «Մերգելյանի թեորեմ» եւ «Մերգելյանի բազմություններ» արտահայտություններն արժանացան համընդհանուր ճանաչման եւ ընդգրկվեցին մաթեմատիկական գիտությունների գանձարանում:

«Նրա մուտքը գիտական աշխարհ, հայկական մաթեմատիկական դպրոցի կայացման եւ առաջընթացի գործում, մեծապես նպաստեցին այդ դպրոցի միջազգային լայն ճանաչմանը: Նա նաեւ գիտության առաջնակարգ կազմակերպիչ է, եւ շատ մեծ է նրա դերը մեր երկրի հաշվողական տեխնիկայի զարգացման գործում»,—նշեց Վալերի Մարտիրոսյանը: Նշենք, որ բոլորիս հայտնի Երեւանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական (Մերգելյանի անվան) ինստիտուտը ստեղծվել է Մերգել Մերգելյանի կողմից՝ 1956 թ. եւ ստացել համամիութենական կարելություն: Նա ղեկավարել է ինստիտուտը շուրջ 4 տարի, այնուհետեւ ստեղծել ԽՍՀՄ ԳԱ մաթեմատիկական ինստիտուտի համալիր վերլուծության բաժինը:

«Մեծ մաթեմատիկոսը մեր գիտություն մտավ շատ կարելոր պահի, երբ Հայաստանում ձեւավորվում էր մաթեմատիկական դպրոցը: Նա եղավ այդ դպրոցի հիմնադիրներից, եւ մաթեմատիկական բնագավառում մեծ է նրա առաքելությունը»,—ասաց ԳԱԱ մաթեմատիկայի եւ տեխնիկական գիտությունների բաժնի ակադեմիկոս—քարտուղար Նորայր Առաքելյանը: Իսկ ՀՀ վարչապետի խոհրդական, ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյանի գնահատմամբ, բավական մեծ պատիվ է նրա նման անձնավորության հետ շփվելն ու, առհասարակ, նրան ճանաչելը. «Ես դեռեւս առաջին հանդիպումից չափազանց մեծ տպավորություն եմ ստացել այդ մարդուց, նա ուղղակի

տաղանդավոր անձնավորություն է: Քանի որ նա զբաղվում էր նաև ռադիոտեխնիկայով, դա մեզ ավելի միմյանց մոտեցրեց: Ես Մոսկվայից բավական դժվարությամբ Երեւան վերադարձա, քանի որ այստեղ էր Մերգեյ Նիկիտիչը: Բոլորի համար արդեն իսկ մեծ պատիվ էր նրա հետ աշխատելը, եւ ինձ նույնպէս հնարավորություն ընձեռվեց նրա նման ղեկավար ունենալ: Նա միշտ խոսում էր այն մասին, որ զարգացնելով բարձր տեխնոլոգիաները, առաջին հերթին ցանկանում է նպաստել Հայաստանի համակարգչային գիտության զարգացմանը»,–նշեց Ֆադեյ Սարգսյանը: Իսկ ԳԱԱ փոխնախագահ Յուրի Շուքուրյանը հիշեցրեց, որ իր երիտասարդության տարիներին նա մեծ հետաքրքրությամբ էր ընթերցում նրա մասին հրատարակված գրքերը: «Մեր գիտությունը երիտասարդ է, քանի որ հաշվողական գիտությունների կիրառական մաթեմատիկական մաթեմատիկայի երիտասարդ ճյուղերից է, եւ նրա ներդրումն այդ ուղղության մեջ շատ կարեւոր է: Ուստի մեծ գիտնականի խորհուրդները թույլ կտան զարգացնել հաշվողական գիտությունը»: Հավելենք, որ ՀՀ նախագահի հրամանագրով Հանրապետության տոնի կապակցությամբ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Մերգեյ Մերգելյանը պարգևատրվել է Մեսրոպ Մաշտոցի շքանշանով: Նրա մտերիմներից մի քանիսից տեղեկացանք, որ հայ մեծ գիտնականն այժմ բնակվում է ԱՄՆ-ի Կալիֆորնիա նահանգի Հյուսիսային Հոլիվուդ թաղամասում:

Լուսինե ՆԱԶԱՐՅԱՆ

05-06-2008

ՎԱԽՃԱՆԿԵՑ ՍԵՐԳԵՅ ՍԵՐԳԵԼՅԱՆԸ

Երկարատեւ հիվանդությունից հետո Լոս Անջելեսում օգոստոսի 20-ին վախճանվել է ականավոր գիտնական, ակադեմիկոս Մերգեյ Մերգելյանը: Գիտությունների ազգային ակադեմիան եւ Գիտության պետական կոմիտեն իրենց վշտակցությունն են հայտնել անվանի գիտնականի մահվան կապակցությամբ՝ նրա մահը համարելով անդառնալի կորուստ ողջ հայ ժողովրդի եւ առաջին հերթին Հայաստանի գիտական հանրության եւ մտավորականության համար: Ս. Մերգելյանը ծնվել է 1928-ին: Էքստենզ ավարտելով ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը՝ նա 19 տարեկանից

ակտիվորեն մուտք է գործում ստեղծագործական աշխատանքի հորձանուտ: 21 տարեկան հասակում Մերգեյանը դառնում է գիտությունների դոկտոր, 25 տարեկանում ընտրվում ԽՍՀՄ եւ ՀԽՍՀ ԳԱ քոթակից անդամ, իսկ 28 տարեկանում՝ Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս: Անցյալ դարի 50-ականներին Մերգեյ Մերգեյանն Հայաստանում ստեղծում է կիրառական մաթեմատիկայի եւ հաշվողական տեխնիկայի գիտատեխնոլոգիական նոր ուղղություն, որը մեծ համբավ բերեց Հայաստանին: Նրա ղեկավարությամբ կազմակերպվել է մաթեմատիկական մեքենաների Երեսանի գիտահետազոտական ինստիտուտը, իսկ հետագայում՝ նաեւ արտադրական ձեռնարկություններ, սկսվել է ժամանակակից հաշվողական մեքենաների արտադրությունը: Շնորհիվ ակադեմիկոս Մերգեյանի գիտակազմակերպական տաղանդի՝ Հայաստանը դարձավ այդ ուղղությամբ ԽՍՀՄ հիմնական կենտրոններից մեկը: Ակադեմիկոս Մերգեյանը եղել է Գիտությունների ակադեմիայի փոխարեգիդենտը, Գիտությունների ակադեմիայի եւ ԵՊՀ-ի հաշվողական կենտրոնի հիմնադիրն ու առաջին տնօրենը, ԵՊՀ ամբիոնի վարիչ: Մերգեյ Մերգեյանը եղել է նաեւ ԽՍՀՄ ԳԱ Ստեկլովի անվ. Մաթեմատիկայի ինստիտուտի կոմպլեքս անալիզի բաժնի հիմնադիրը եւ ղեկավարը: Մերգեյ Մերգեյանի ծառայությունները ըստ արժանվույն գնահատվել են նաեւ անկախ Հայաստանի կառավարության կողմից. 2008 թ. նա արժանացավ հանրապետության բարձրագույն պարգևին՝ Մեսրոպ Մաշտոցի շքանշանի:

THE DEMOGRAPHIC SITUATION IN KARABAKH IN THE 1710-1720s

ARMEN AIVAZIAN is Senior Researcher, the Matenadaran - the Yerevan Institute of Medieval Manuscripts after St. Mesrop Mashtots Adjunct and Senior Lecturer of Political Science, American University of Armenia.

THE EVIDENCE

There is specific evidence on the demographic situation in Eastern Armenia, and particularly in Karabakh and Kapan in the 1710-20s. Thus, Vardapet Minas Tigranian, after completing his secret mission to Persian Armenia ordered by the Russian Tsar Peter the Great in 1716, stated in a report dated March 14, 1717:

"Surrounding the Gandzasar monastery (i.e. in Karabakh), that [i.e. Gandzasar] patriarch has under his [religious] authority 900 villages, and these are big villages, with 100, 200, 300, 400 and more households. It is a five-day journey on packed horses from Gandzasar to the monastery of Echmiadzin, where the other patriarch resides (i.e. Catholicos of All Armenians). The latter has even more villages under his authority than the Patriarch Yesayi has, but he [i. e. Minas] does not know their exact number. ... Altogether, under the authority of these two patriarchs there are some 200,000 [households] of Armenians, the merchants and the peasantry."

On 5 November 1724, the Karabakh Armenian envoys made the following statement to the Russian court in St. Petersburg:

"In Karabakh province alone, the Armenian nation, the military and all others, counts for 100,000 households; not counting the other Armenian province, Kapan, which is situated between Erivan and Karabakh... and the Armenian people of that Kapan province is more numerous than in Karabakh, and they are predominantly merchants." Later, in their 25 July 1725 letter to Yekaterina 1, the Russian Empress (1725-1727), the Karabakh leaders mentioned that their smallest villages had from 30 to 50 households, and the biggest ones - up to 600 households.

THE ANALYSIS

1. While counting the population of Karabakh, one should remember that in the 18th century Karabakh included also some peripheral territories which, in 1923, were left out of the newly-

drawn boundaries of the nagorno-karabakh autonomous oblast (NKAO). These armenian territories were situated around NKAO's whole perimeter along the natural geographical border. These comprised Gyulistan (formerly Shahumian district of NKAO), Getashen (currently Chaykend), Getabek and Karahat (currently Dashkesan) regions to the north and north-west, Karavachar (Kelbajar) to the west as well as the southern part of the Dizak melikdom (currently, Hadrut district) lying to the south as far as the Arax river.

2. If we take five souls as the smallest number for an Armenian household in the beginning of the 18th century, the entire population of what could be called "greater" Karabakh would be estimated about traditional Armenian household in the 17th-18th centuries often included 10, 20, and sometimes up to 30-40 souls. Nevertheless, we are of the opinion that when referring to their 100,000 households, the Karabakh Armenians took as the basis for their estimate an elementary unit of a traditional family rather than an entire traditional family.

3. We are inclined to include into these 100,000 households living in Karabakh in 1724, the Armenian part of population of the city of Ganja (Gandzak) and the surrounding Armenian villages. Our point is that, during and after the Turkish army's unsuccessful attack on Ganja in October 1723, the majority of the population of Ganja, both Armenians and Muslims, abandoned the city. As the Armenian priest Alexander was writing from Shamakhi on December 20, 1723, already at that junction, almost all Armenians of Ganja had left for Karabakh:

"... [after the Turks] captured half of the city, they plundered all the belongings of our Armenian nation, some of them were massacred, others -- driven into slavery. ... 60 households were sent to Turkey. All others became refugees, unclothed and barefooted, and left for Armenian Seghnakhs (i.e. Karabakh and Kapan)..."

According to a French-written document dated August 8, 1725, the outlying district of Ganja, which was captured by the Turks in 1723, was populated exclusively by the Armenians - faubourg des Armeniens. (It should be noted that there was also an Armenian population inside the walls of Ganja.) This faubourg of Ganja (in a contemporary document in Russian it is identified as *armyanskiye slobodi za gorodom*) is referred to by the Armenian priest as only "half of the city." However, historically, the part of a medieval city which lay outside the city walls usually had a population several times as large as the population inside the walls. Thus, for example, according to Jean Baptiste Tavernier, the famous French traveler, in the middle of the 17th century, Yerevan's fauxbourg was

populated by 20 times as many people as those living within the city walls. According to the information provided by Israel Ori on September 22, 1699: "...all around that city [e. i. ganja], there are [residing armenian] christians" ("...tout autour de laditte ville, se (=ce) sont des chrestien"). Evidence for the size of the Armenian population of Ganja is Israel Ori's intention to raise 15,000 Armenian soldiers from that city and the surrounding district.

Interestingly, the Armenian army stationed in Karabakh did not hesitate to send envoys to the retreating Turkish army, demanding an immediate release of all Armenian prisoners taken in Ganja. Having considered the poor condition of his troops after the Ganja setback vs. the crack and well-armed forces in Karabakh, Ibrahim pasha, Turkish commander-in-chief, promptly met this Armenian demand. Hence, those 60 households of captive Armenians from Ganja (see document cited above) also ended up in Karabakh. The mass movement of Armenians from Ganja as well as from other nearby regions into Karabakh, under the protection of Armenian troops, is confirmed by later sources as well: e. g. in 1726 only 5-6 Shiite Muslim families, and about 50 Armenian families remained in Ganja, while all the Armenian villages of the vicinity were completely abandoned. Thus, beginning from November, 1723, Karabakh became the shelter for the tens of thousands of Armenian refugees.

4. In the 1720s Karabakh and the adjacent Armenian mountainous province of Kapan were capable of raising an Armenian force of up to 50,000-60,000 soldiers (of which two-thirds were in Karabakh). A ratio of one soldier to 10 people is very reasonable for these two extremely militarized Armenian self-governing regions, facing and effectively resisting the larger Ottoman regular armies. Such a ratio also suggests that the Armenian population in "greater" Karabakh numbered about half a million.

5. If we take 315, the arithmetical mean from 30 and 600 - the greatest and smallest numbers of households in Karabakh villages mentioned by the Armenian leadership in 1725 (ARO, II, doc. 315, p. 249) - and multiply this figure by 900, the number of villages mentioned by Minas Tigranian in 1717, we will have 283,500 house-holds, or 1,417,500 souls for the entire population of Karabakh.

If we take 250, the arithmetical mean from 100 and 400 - the greatest and smallest numbers of households in Karabakh villages mentioned by Minas Tigranian himself in 1717 (ARO, I, doc. 154, p. 370) - and or 1,125,000 souls for the entire population of Karabakh. Undoubtedly, these are exaggerated estimations. However,

they strongly support the reliability of the figure of 500,000 for the population in Karabakh in the 1710-1720s.

6. In 1783, the Gandzasar Catholicos Hovanes counted 30,000 Armenian households in Karabakh. This figure also corroborates the probability that there were 100,000 Armenian households in Karabakh in the 1710-1720s, because the Ottoman invasion and subsequent devastating internal fighting in Iran caused a catastrophic decline of Armenian population in Eastern Armenia. One well-informed Armenian leader said in 1792 that "during the reign of King Peter [the Great] (i.e., in the first quarter of the 18th century) the Armenians were ten times as many [as compared to the 1790s]." the 1790s]."

CONCLUSION

We can conclude, therefore, that 500,000 people is a reliable approximate number for the population of Karabakh in the 1710-1720s.

NOTES:

1. See *Armiano-russkie otnoshenia v 1-oi treti XVIII veka. Sbornik dokumentov. T. II, chast' I. Pod redaktsiei Ash. Ioannisiana, Yerevan, 1964* [The Armenian-Russian Relations in the First Three Decades of the XVIIIth century. Collection of Archival Documents. Vol. II, Part I, Edited by Ashot Ioannissian], Thereafter - ARO, I, doc. 147.

2. Likewise, in 1721 Durri-Muhammad Effendi, the Turkish envoy to Persia, on his return reported to the Sultan that in Persia "every village has 300, 500 and 1000 households." See *Turkish Sources About Armenia, the Armenians and the Peoples of the Transcaucasus. Preface, trans. from Turkish and commentaries by A. Safrastian (Yerevan: Armenian Academy of Sciences, 1964) (in Armenian), pp. 125.*

3. ARO, I, doc. 154, p. 370.

4. *Armiano-russkie otnoshenia v 1-oi treti XVIII veka. Sbornik dokumentov. T. II, chast' II. Pod redaktsiei Ash. Ioannisiana, Yerevan, , 1967*

[The Armenian-Russian Relations in the First Three Decades of the XVIIIth century. Collection of Archival Documents. Vol. II, Part II, Edited by Ashot Ioannissian], Thereafter - ARO, II, doc. 291, p. 205.

5. ARO, II, doc. 315, p. 249

6. According to a European source, at the turnover of the 16th century, the province of Ganja, intermittently referred also as Karabakh in official Safavid documents, had 250, 000 inhabitants. See Don Juan of Persia. A Shiah Catholic 1560-1604. Transl. and ed. by G. Le Strange, London 1926, pp. 41-2. Cf. Tadhkirat Al-Muluk. A Manual of Safavid Administration (circa 1137/1725). Translated and explained by V. Minorsky. London: W. Heffer & Sons, 1943, pp. 44, 166.

7. See, e. g., Zakaria Sarkavag, A Chronicle. Vol. 2, (Vagharshapat, 1870), p. 132 (in Armenian); Bedik Petrus. Cebil Sutan (Viennae, 1678), p. 379; M. M. Karapetian, "The Dynamics of the Number and Ethnic Structure of the Populaton of Yerevan in 1600-1724," Patma-banasirakan Handes, 1986, No. 2 (113), p. 103, note 33 (in Armenian); H. S. Eprikian. Bnashkharhik Bararan [A Geographical Dictionary], Vol. 2 (Venice, 1907), p. 386; Avgust Gakstauzen, Zakavkazskiy Kray [The Transcaucasian Region] (St. Petersburg, 1856) Vol. 1, p. 190.

In the 17-18th century, the same reality was true for Georgia as well; see N. A. Bregadze, "On the Question of Ethnic Composition of the Population of Georgia in the 17th century," Kavkazskiy Etnografi-cheskiy Sbornik, Vol. VI, Moscow, 1976, p. 245 (in Russian).

8. On this battle, see A. M. Aivazian, "The Events in Trascaucasia in 1723 and the First Support March of Artzakh Armenians to Siunik," Patma-banasirakan Handes, 1990, No. 4 (131), pp. 71-73 (in Armenian); ARO, II, pp. LXVI-LXXV.

9. ARO, II, docs. 195, 196, pp. 53, 54. From 1722 to the 1730s, the external powers (as well as the Armenians themselves) referred to Karabakh and Kapan by new terms which were absolutely different from their previous geographic and administrative definitions, namely -- Seghnakh(s) or Armenian Seghnakh(s) (Seghnakh signified a fortified mountain area characterized by mutually supporting defensive works and fortresses), Armenian Assembly, Armenian Army, and even Assembly of the Armenian Army. The appearance of these new designations amounts to the de facto recognition of Karabakh and Kapan's actual decade-long Aivazian, The Armenian Rebellion of the 1720s and the Threat of Genocidal Reprisal (Yerevan: Center for Policy Analysis, American University of Armenia, 1997). VI+87 pp., with a map and table, pp. 17-18.

10. I. M. Tabagua. Materiali dlya istorii Gruzii pervoy chetverti XVIII veka [Materials for the History of Georgia of the First Quarter of the 18th century], Tbilisi, 1982, p. 304.

11. Cf. ARO, II, doc. 194, p. 51.

12. Les Six Voyages de Jean Baptiste Tavernier en Turquie, en Perse, et aux Indes. Paris, Tome 1, 1679, p. 38. Cf. M. M. Karapetian, "The Dynamics of the Number and Ethnic Structure of the Population of Yerevan in 1600-1724," *op. cit.*, pp. 95-102.
13. See G. A. Ezov, *Snosheniya Petra Velikovo s Armyanskim Narodom*, (St. Petersburg: Tipographia Imperatorskoy Akademii Nauk, 1898), doc. 9, pp. 33, 36.
14. See ARO, II, document 194, p. 51.
15. AVPR - Archiv Vneshney Politiki Rossii (Russian Foreign Policy Archives), Moscow, Funds on "Relations with Persia," inventory 1, 1726, file 4, fols. 211a-212a. Cf. also G. G. Paychadze. *Russko-gruzinskiye otnosheniya v pervoy polovine XVIII veka*. Tbilisi: "Sabchota Sakartvelo," 1970 (in Russian), p. 79. V. A. Parsamian. *The Participation of Polish Armenians to the Rebellion by Davit-bek*. Yerevan, 1962 (in Armenian), p. 67, cf. ARO, II, docs. 358-359, 366, pp. 299, 302, 307.
16. Armen Aivazian, *The Armenian Rebellion of the 1720s and the Threat of Genocidal Reprisal*, pp. 7-9, 60-63.
17. *Ibid.*, pp. 6-20.
18. *Sbornik dokumentov*. T. IV. Pod redaktsiei M. G. Nersisiana, Yerevan, 1990 [The Armenian-Russian Relations from 1760 to 1800. Collection of Archival Documents. Edited by M. G. Nersisian], doc. 128, p. 209.
19. A letter written by Joseph Emin on 1 January 1792; see Patma-Banasirakan Handes 131:4 (1990), p. 193. On the Armenian casualties in the 1720s and the decline of Armenian population, see Armen Aivazian, *The Armenian Rebellion of the 1720s and the Threat of Genocidal Reprisal*, pp. 36-39.